«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան»

հիմնադրամի կառավարիչ- ռեկտոր

________________ Սրբուհի Գևորգյան

«____» ________ 2023թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Նաղդալյան Միեր Կարենի «Ժամանակային հեռանկարի առանձնահատկությունները մարտական գործողությունների մասնակիցների շրջանում» ԺԹ. 00.04 *«Կլինիկական, հատուկ հոգեբանություն»* մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Հոգեբանական գիտության մեջ «Ժամանակային հեռանկար» հասկացությունը համեմատաբար նոր է, հետաքրքրական, նշանակալի այս բնագավառում նոր հետազոտությունների տեսանկյունից: Ժամանակի նկատմամբ մարդու վերաբերմունքի առավել ամբողջական մոդելը փոխկապված է անձի հոգեբանական բնութագրիչների և դրանց դրսևորումների հետ: Կյանքի փոփոխվող, անկայուն իրադրություններում ժամանակային հեռանկարը կրում է որոշակի փոփոխություններ: Հատկապես մեր իրականությունում մարտական գործողությունների մասնակից անձանց մոտ ժամանակային հեռանկարների ուսումնասիրությունն առավել արդիական է:

Հոգեբանական գիտության մեջ ժամանակային հեռանկարների հիմնախնդրին են անդրադարձել Ֆ. Զիմբարդոն, Ջ. Բոյդը, ովքեր իրենց աշխատանքներում մեծ ներդրում են ունեցել «ժամանակային հեռանկար» հասկացության մշակման և դրա հետ կապված հետազոտություններում: Կոգնիտիվ տեսություններում տեսնում ենք,

որ անցյալի բացասական համոզմունքները, այդ թվում՝ բացասական անցյալի ժամանակային հեռանկարը, գործոններ են, որոնք ամրապնդում են ՀՏՍԽ ախտանիշները: Սակայն հիմնախնդիրը բազմակողմանիորեն այնուամենայնիվ ուսումնասիրված չէ:

Ատենախոսական աշխատանքում ժամանակային հեռանկարների՝ Ֆ. Զիմբարդոյի և Ջ. Բոյդի մոտեցման վրա հիմնվելով՝ ատենախոսն իրականացրել է ժամանակային հեռանկարների ուսումնասիրություն մարտական գործողությունների մասնակից անձանց շրջանում, ինչը բացահայտել է նրանց մոտ «դրական» և «բացասական» ԺՀ-ների արտահայտվածության նոր օրինաչափություններ: Սա ընդլայնում և հարստացնում է ժամանակային հեռանկարի հոգեբանական նշանակության մասին պատկերացումները և իր ներդրումն է ունենում առկա տեսական հիմքերի ամբողջականացման գործում, քանի որ ատենախոսական աշխատանքում ժամանակային հեռանկարը դիտարկվում է անձնային առանձնահատկությունների հետ միասին և մարտական գործողությունների մասնակցության համատեքստում: Սա հիմքեր է ստեղծում հիմնախնդրի ավելի մանրամասն ուսումնասիրության համար: Այս տեսանկյունից հետազոտվող հիմնախնդիրը արդիական է, նպատակային:

Աշխատանքում ատենախոսն առաջադրում է հետազոտությամբ հիմնավորված նորույթն այն մասին, որ մարտական գործողությունների մասնակից անձանց շրջանում ժամանակային հեռանկարների ինչպես նաև անձնային գծերի հետ առկա են դրանց փոխկապվածություններ, ինչպես նաև ատենախոսի կողմից փորձ է արվել ցույց տալ, որ մարտական գործողությունների մասնակից անձանց շրջանում, անկախ ՀՏՍԽ ախտանիշների առկայությունից, «բացասական» և «դրական» ԺՀ-ների արտահայտվածության ցուցանիշները տարբեր են:

Իրականացված հետազոտության արդյունքներն ատենախոսի կողմից ներդրվել են հոգեթերապևտիկ մարտավարությունների կատարելագործման համար,

որոնք առավել արդյունավետ են մարտական գործողությունների մասնակից անձանց հետ աշխատանքում:

Հետազոտական աշխատանքի նպատակից ելնելով ատենախոսն առաջադրում է յոթ խնդիրներ, որոնք լուծված են աշխատանքում: Դրանք վերաբերվում են հիմնախնդիրների համատեքստում ժամանակային հեռանկարների ուսումնասիրությանը, դրանց վրա անձնային առանձնահատկությունների և ՀՏՍԽ ազդեցությանը վերաբերող գիտական գրականության ուսումնասիրությանը, աշխատանքում դիտարկվող հիմնախնդիրներին համապատասխան հետազոտվող հոգեբանական երևույթների չափման մեթոդակազմի մշակմանը, ստացված տվյալների չափելիությանը, վարկածով ձևավորված հետազոտական խմբերից ստացված միավորների վիճակագրական փոխկապվածությունների և կորելյացիաների բացահայտմանը: Ատենախոսական աշխատանքում առաջադրված վարկածը հաջողությամբ ապացուցվում է:

Ատենախոսն առաջադրում է պաշտպանությանը ներկայացվող հետևյալ դրույթները, ըստ որի ի տարբերություն մարտական գործողությունների չմասնակցած անձանց՝ մարտական գործողությունների մասնակցած և ՀՏՍԽ ախտանիշներ ունեցող խմբերում «դրական» ժամանակային հեռանկարների արտահայտվածությունը թույլ է, իսկ «բացասական» ժամանակային հեռանկարների արտահայտվածությունը՝ ուժեղ, անձնային առանձնահատկությունների արտահայտվածության մակարդակը նորմայից բարձր է մարտական գործողությունների մասնակիցների և ՀՏՍԽ ախտանիշների բարձր մակարդակ ունեցող անձանց շրջանում՝ ի տարբերություն մարտական գործողությունների մասնակցություն չունեցած անձանց, «դրական» ժամանակային հեռանկարները հակադարձ, իսկ «դրական» ժամանակային հեռանկարներն ուղիղ կորելյացիայի մեջ են գտնվում հիպոխոնդրիայի, դեպրեսիայի և պարանոյալության արտահայտվածության ցուցանիշների հետ, ի տարբերություն ՀՏՍԽ ախտանիշներ չունեցող անձանց՝ ՀՏՍԽ ախտանիշներ ունեցող անձանց շրջանում պարանոյալության, շիզոիդության և հիպոմանիայի ցուցանիշների հետ

ֆատալիստական ներկայի և նեգատիվ անցյալի կորելյացիան ավելի ուժեղ է արտահայտված:

Ատենախոսական աշխատանքում հետազոտության համակազմում ընդգրկվել են մարտական գործողությունների մասնակցած անձինք, իսկ մարտական գործողությունների մասնակցության գործոնի ազդեցությունը մնացած այլ գործոններից տարանջատելու համար ատենախոսի կողմից ընտրվել են նույն տարիքային միջակայքում գտնվող, նույն սեռին պատկանող, սակայն մարտական գործողությունների երբևէ չմասնակցած անձանցից կազմված ստուգիչ խումբ:

Հետազոտության անցկացման համար աշխատանքում ընտրվել են «Առաջնային օգնության ՀՏՍԽ սքրինինգ թեստը՝ ըստ DSM-5-ի» հարցարանը (PC-PTSD-5) հետազոտվողների մոտ ՀՏՍԽ ախտանիշների մակարդակի բացահայտման համար, Զիմբարդոյի և գործընկերների մշակած «Ժամանակային հեռանկարի հարցարանը» (ZTPI) ընտրվել է ժամանակային հեռանկարների հասկացման համար, իսկ անձնային գծերի և հոգեպաթոլոգիաների բացահայտման համար օգտագործվել է «Մինեսոտայի բազմափուլ անձնային հարցարանի» (MMPI) սեղմ տարբերակը «Մինի մուլտը»: Տվյալների վերլուծության ընթացքում տարբեր խմբերում ստացված միջին արդյունքների համեմատության դեպքում հավաստիության համար հաշվարկվել է «Սթյուդենտի t գործակիցը»: Կորելյացիաների դեպքում կիրառվել է «Սպիրմենի ռանգային կորելյացիայի գործակիցը»:

Ատենախոսական աշխատանքն ընդգրկում է ներածական, հիմնական և ամփոփիչ հատվածներ: Հիմնական հատվածը կազմված է չորս գլուխներից, որոնցից առաջին երկուսում արտահայտված են ժամանակի՝ որպես հոգեբանական երևույթի նկատմամբ գիտական հայացքների զարգացումը և «ժամանակային հեռանկար» հասկացության դերի դիտարկումը: Երրորդ և չորրորդ գլուխներում նկարագրված են հետազոտական գործընթացը և տվյալների վերլուծությունն ընդգրկող հատվածները: Աշխատանքը ավարտվում է եզրակացություններով:

Աշխատանքի թեման ներկայացված է հեղինակի կողմից 3 գիտական հոդվածներում, որոնցից մեկը «Սկոպուս» համակարգում գրանցված պարբերականում:

Աշխատանքը ամբողջական է իր տրամաբանության և շարադրանքի մեջ ընտրված մեթոդակազմը և վերլուծության մեթոդները համապատասխանում են առաջ քաշված խնդիրներին, վարկածին, իսկ պաշտպանությանը ներկայացվող դրույթները բխում են եզրակացություններից:

Ատենախոսությունը Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում է հիմնական դրույթները:

Ծանոթանալով ատենախոսության հիմնական դրույթներին՝ ունենք նաև որոշ դիտողություններ և ցանկություններ:

1. Չնայած հոգեբանության ոլորտում կլինիկական հոգեբանությունը կարևոր տեղ է զբաղեցնում և անհրաժեշտ է հատկապես Հայաստանում զարգացնել, այնուամենայնիվ նշենք, որ աշխատանքը առավել շատ ընդհանուր հոգեբանության ոլորտին է վերաբերվում:
2. Ատենախոսական աշխատանքում հետազոտության օբյեկտը և առարկան կարծում ենք վերաձևակերպան կարիք ունեն, մասնավորապես՝ օբյեկտը կարելի էր ձևակերպել «ժամանակային հեռանկարի առանձնահատկությունների ուսումնասիրությունը», իսկ անձնային գծերը, ՀՏՍԽ-ն, դրանց կապերը՝ առարկան:
3. Կարծում ենք վերաձևակերպան կարիք ունի նաև վարկածը, քանի որ նշված է, որ <<որոշ անձնային գծերի արտահայտվածության մակարդակը բարձր է>>, իսկ վարկածը պետք է լինի շատ հստակ, մասնավորապես ո՞ր անձնային գծերը, իսկ վարկածի երկրորդ մասը, այսինքն նախադասության վերջը, հասկանալի չէ՝ շարունակում է սկզբին, թե այլ պնդում է: Եթե շարունակում է,

ապա կետադրությունն է սխալ, եթե այլ պնդում է, ապա երկու վարկած կարող է լինել:

4. Ատենախոսական աշխատանքի տեսական գլուխները, դրանցում զետեղված ենթագլուխները չունեն եզրակացություններ, ատենախոսի կողմից տեսական ընդհանրացումներ, մինչդեռ ատենախոսության խնդիրներից 1-ինը ենթադրում է ոչ միայն հիմնախնդրի վերաբերյալ տեսագործնական գրականության ուսումնասիրություններ, վերլուծություններ, այլև եզրահանգումներ:
5. Գծապատկերների վերլուծությունները ցանկալի կլիներ առավել հոգեբանական լինեին, քան թվաբանական, թեստային պահանջներին համապատասխան: Ինչպես նաև իրական օրինակների, քեյս մեթոդի առկայությունը կհարստացներ աշխատանքը:
6. Աշխատանքը կշահեր, եթե հեղինակը առավել շատ հայ հեղինակների մոտեցումներից և նրանց աշխատություններից օգտվեր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նաղդալյան Միեր Կարենի <<Ժամանակային հեռանկարի առանձնահատկությունները մարտական գործողությունների մասնակիցների շրջանում>> ԺԹ. 00.04 <<Կլինիկական, հատուկ հոգեբանություն>> մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ինքնուրույն և ավարտուն աշխատանք է, որն ունի տեսական և կիրառական նշանակություն: Ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ Միեր Կարենի Նաղդալյանը արժանի է հոգեբանական

գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ԺԹ.00.04 <<Կլինիկական, հատուկ հոգեբանություն>> մասնագիտությամբ:

Կարծիքը քննարկվել է ՀՊՄՀ Կիրառական հոգեբանության ամբիոնի 05.09.2023թ.-ի նիստում /արձանագրություն համար 1/, որին մասնակցել են ամբիոնի վարիչ, հ.գ.թ., դոցենտ Մ. Ավետիսյանը, հ.գ.դ., պրոֆեսորներ՝ Կ. Վարդանյանը, Ն. Հակոբյանը, հ.գ.թ., դոցենտ Ն. Ստեփանյանը, հ.գ.թ., դոցենտ Ա. Առաքելյանը, հ.գ.թ., դոցենտ Ա. Բեջանյանը, գործավար՝ Ս. Գրիգորյան:

ՀՊՄՀ Կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչ՝
հ.գ.թ., դոցենտ Մ.Ս. Ավետիսյան

Հաստատում եմ հ.գ.թ., դոցենտ Մ. Ավետիսյանի ստորագրությունը

ՀՊՄՀ գիտական քարտուղար՝ պ.գ.թ., դոցենտ Մ. Մ. Իսպիրյան

<<05>> 09 2023թ.